կան չտաբ, որոնց ենթարկվում էին ճակատապետներն ու վաշտապետները։ 20—50 տարեկան բոլոր տղամարդիկ տրված էին զէնքի տակ, երկրապահ դինուորութեան դրութեամբ, 20—25 ընտիր սպաների ղեկավարութեան տակ։ Դեկտեմբերի կէսերին Դորիս հասաւ Դրօի էկսպեդիցիոն զօրամասը, և Դրօն յայտարարեց Զանգեզուր–Ղարաբաղի ընդհանուր հրամանատար։

Այսպէս կազմակերպուած, յունվ. 19–ին, զանգեզուրցիք մի գրոհով մաքրեցին Բուն Զանգեզուրի և Ղափանի միջև ընկած տարածութիւնը՝ Դոնդարլու—Շուռ—Նուխ—Ասկիլումի թրքական շրջանը, մօտ 30 գիւղ։ Մարտին գրաւեց Աւղալար–Ալեանչու–Մուսուլմանլար–Բարգիւշատ շրջանը, ուր գտնւում էին մօտ 120 թրքական գիւղեր։ Թրքութիւնը թողեց ու հեռացաւ Ադրբէջան։

Իր հերթին, գործի վրա էր և Սուլթանովը։ Նոյեմբերի պարտութիւնից յետոյ, նա եռանդով պատրաստւում էր Զանգեզուրի և Ղարաբաղի գրաւման։ Օգոստ. 22–ի համաձայնութիւնը նրա ձեռքին ժամանակ վաստակելու միջոց էր լոկ։ Մի կողմից աշխատում էր պառակտել ղարաբաղցիներին, միւս կողմից զինուորական ուժեր համախմբել՝ Ղարաբաղը զէնքով ընկճելու դիտաւորութեամբ։ Փետրուարին համարեա ադրբէջանեան ամբողջ բանակը— մօտ 10 հազար հոգի — հաւաքւած էր Ղարաբաղի ճակատում։ Լուրեր էին տարածւում որ ադրբէջանեան զօրամասերի ընդհանուր ղեկավարն է Նուրի փաշան, օգնականը՝ զօր. Նևրուզովը և նրանց տրամադրութեան տակ գտնւում են բազմաթիւ թիւրք սպաներ։

Ղարաբաղցիք տեսնում էին այդ և նոյնպէս պատրաստութիւններ տեսնում՝ վիժեցնելու համար Սուլթանովի ծրագիրները։ Գաւառում գործում էր Ինքնապաշտպանութեան Մարմինը սպայ Զ. Մեսեանի, Ա. Միքայէլեանի և ուրիշների մասնակցութեամբ։ Ղարաբաղի և Զանգեզուրի միջև հաստատւած էր համագործակցութիւն, և Ղարաբաղը դրսից ստանում էր ռազմամթերք ու նիւթական օգնութիւն։

Երկու կողմերը՝ Սուլթանովն ու ղարաբաղցիք պատրաստւում էին տենդագին և առանց ծածկելու։ Փետր. 19–ին, երբ Ադրբէջանն արդէն բաւականաչափ զօրք էր համախմբել Ղարաբաղի շուրջ, Սուլթանովը դիմեց Շուշիի Հայոց Ազգ. Խորհրդին՝ պահանջելով Ղարաբաղը յայտարարել Ադրբէջանի մաս։ Սուլթանովի համար այլևս Հաշտութեան Վեհաժողով գոյութիւն չունէր, և «սահման քաշաց զէնն իւրեանց» սկզբունքը մնացել էր միակ հեղինակաւորը։

Այս պահանջի առթիւ, փետր. 22–ին, Շոշու գիւղում գումարւեց 8րդ համագումարը, որին ներկայ էին 96 պատգամաւորներ Գիւլիստանից, Ջիւանշիրից, Խաչէնից, Դիզակից ու Վարանդայից։ Համագումարը որոշեց՝ մերժել Սուլթանովի պահանջը և շարունակել մնալ օգոստ. 22–ի համաձայնութեան գետնի վրա։ Միաժամանակ, համագումարը բուռն կերպով բողոքեց Սուլթանովի գործած կամայականութիւնների, բռնութիւնների ու սպանութիւնների դէմ։